

Հարգելի՛ պարոն Յովհաննիսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություն հետևյալ հարցերի շուրջ.

1. 6-17 տարեկան քանի՞ հաշմանդամություն ունեցող երեխա կա Արմավիրի մարզում: Նրանցից քանի՞սն ունեն մտավոր խնդիրներ և քանի՞սը՝ ֆիզիկական (խնդրում եմ առանձնացնել հենաշարժողական խնդիր ունեցողների թիվը նույնպես):
2. 6-17 տարեկան քանի՞ հաշմանդամություն ունեցող երեխա է սովորում Արմավիր մարզի հանրակրթական դպրոցներում: Նրանցից քանի՞սն ունեն մտավոր խնդիր և քանի՞սը՝ հենաշարժողական:
3. Ո՞ր հանրակրթական դպրոցներում են սովորում վերոնշյալ խմբերին պատկանող աշակերտները: Խնդրում եմ տրամադրել դպրոցների ցանկը:
4. Ներառական կրթության ծրագրում ընդգրկված աշակերտներից քանիսի հետ է իրականացվում տնային ուսուցում և քանի՞սն են հաճախում դպրոց:
5. Հաշմանդամություն ունեցող երեխաների շրջանում կա՞ն պարտադիր կրթությունից դուրս մնացածներ Արմավիրի մարզում: Եթե այո, քանի՞սն են նրանք:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Սոնա Յովսեփյան

Ջեռք մեդիա գործարանի ուսանող, լրագրող

0001, Երևան, Հայաստան  
Նալբանդյան 106/1, Սայաթ-Նովա  
բիզնես կենտրոն  
Ջեռախոս՝ +374 44 20 20 48  
Էլ. հասցե՝ info@mediafactory.am  
Կայք՝ mediafactory.am



0001, Yerevan, Armenia  
106/1 Nalbandyan Sayat-Nova  
Business Center  
Phone: +374 44 20 20 48  
E-mail: info@mediafactory.am  
Website: mediafactory.am